# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"_22_" _մարտի_ 2013թ № _30_

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՑՔ, ՏՈԼՈՐՍ, ՏՈՐՈՒՆԻՔ, ՇԱՔԻ, ԱՐԵԻՍ, ԼԾԵՆ, ՔԱՐԱՇԵՆ, ՔԱՐԱՀՈՒՆՋ, ԲԱՐՁՐԱՎԱՆ և ՇՐՎԵՆԱՆՑ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի բ) ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի «ՀՀ քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» N 624որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետի դրույթների և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու նպատակով հանձնաժողովի կազմը, ստուգման ժամանակացույցը և առաջադրանքը հաստատելու մասին» N133 «Ա» որոշմամբ Սյունիքի մարզի Մուցք, Տոլորս, Տորունիք, Շաքի, Արևիս, Լծեն, Քարաշեն, Քարահունջ, Բարձրավան և Շրվենանց գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության ոլորտում կատարված պլանային ստուգման արդյունքներով կազմված արձանագրությունների, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Քաղաքաշինական գործունեության բնագավառում Մուցք, Տոլորս, Տորունիք, Շաքի, Արևիս, Լծեն, Քարաշեն, Քարահունջ, Բարձրավան և Շրվենանց գյուղական համայնքներում առկա խնդիրներին սահմանված կարգով լուծում տալու նպատակով համայնքների ղեկավարներին առաջարկել.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել համայնքների վարչական տարածքներում հողահատկացման,

ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրման, դրանց նախագծերի հաստատման, համաձայնեցման, ինչպես նաև ինքնակամ շինարարությունների կասեցման և դրանց հետևանքների վերացման ուղղությամբ տարվող գործընթացները՝ ապահովելով քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը.

2) համայնքի ավագանու նիստում քննարկել քաղաքաշինական գործունեության պլանային ստուգման արդյունքները և ձեռնարկված միջոցների մասին տեղյակ պահել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:

2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թ. մարտի 22
ք. Կապան